պաշտպանութիւն են վայելում թուրք կառավարութեան կողմից: Ինչո՞ւ: Որովհետեւ այդ մարդիկ շատ լաւ գործիքներ են նրա ձեռքում, ինչպէս ասացի, քրիստոնեաների ազգային կապերը կտրատելու համար: Հայ-կաթոլիկը, հայ-բողոքականը իրան հայ չէ համարում: Հայ լուսաւորչականը նոյնպէս նրանց հայ չէ անուանում: Իւրաքանչիւրը իր ազգութիւնը ճանաչում է իր եկեղեցու անունով: Ուրեմն, որքան շատ կը լինի տարբեր եկեղեցիների թիւը, այնքան շատ կը մասնատոի ազգային ամբողջութիւնը եւ, հետեւապէս, կը թուլանայ նրա քաղաքական նշանակութիւնը: Այդ շատ նպաստաւոր է տիրող կառավարութեան համար, մանաւանդ, որ քրիստոնեաների հարցը ամէն անգամ մեծ դժուարութիւնների մէջ է դնում նրան:

Նրա խօսքը ընդհատեց մեր հիւրընկալ Թաթօս եղբայրը, որ, մօտենալով, ներողութիւն խնդրեց տեղի ունեցած անախորժութեան մասին եւ հրաւիրեց մեզ սրահը ընթրիք ուտելու:

— Ես պէտք է ներողութիւն խնդրեմ, — պատասխանեց Ասլանը, — իմ ընկերը թէեւ փոքր-ինչ դիւրագրգիռ մարդ է, բայց շատ բարի սիրտ ունի:

Ջալլադին գտնել չկարողացան: Ընթրիքից յետոյ խնդրեցինք մեզ համար քնելու տեղ պատրաստել նոյն առոակի մօտ, ծառերի ներքոյ, որովհետեւ սրահում օդը սաստիկ խեղդող էր, եւ մանաւանդ զանազան միջատներ գիշերը կարող էին անհանգիստ անել մեզ: Ջալլադը դեռ չէր վերադարձել, երբ ես եւ Ասլանը պատրաստոեցինք քնելու:

— Ու՞ր գնաց նա, — հարցրի ես:

— Երեւի, կը գայ, — պատասխանեց Ասլանը:

— Բայց որքա՜ն լաւ խօսում էր նա, որքա՜ն հմուտ է սուրբ գրքերի գիտութեան մէջ: Ես երբեք չէի կարծում, որ Ջալլադը այդ աստիճան զարգացած մարդ լինէր:

Ասլանը ծիծաղելով ասաց.

— Նա ինքը բողոքական է:

— Բողոքակա՜ն է, ի՞նչ էք խօսում:

— Եւ բողոքականի քահանայ է:

Ես շոարած մնացի:

Ես իսկոյն գնացի նրան որոնելու: Պարտէզի մի հեռաւոր անկիւնում գտայ նրան, ծունր դրած գետնի վրայ, լուռ աղօթում էր: Ու՞մ համար էր այնպէս յափշտակոած աղօթում նա: Երեւի, իր մոլորեալ «եղբայրքների» համար...